ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
Երկրաբանություն և աշխարհագրություն 55(2), 2021 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 551.58

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ՅՈՒՐԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ *

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

ՀՀ-ում բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման ժամանակակից պատկերն իր վրա է կրել պատմական, բնաաշխարհագրական, սոցիալ-տնտեսական և այլ գործոնների ազդեցությունը: Վերջիններիս հետևանքով ՀՀ տարածքն առանձնանում է բնակչության և բնակավայրերի խիստ անհավասարաչափ, օջախային տեղաբաշխմամբ: Հոդվածում տրվել է ՀՀ-ում բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և վերջիններիս հետ կապված տարածքի յուրացվածության աստիճանի հարցերը:

https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.2.137

***Keywords*:** settlement, economic development, settlements classification, uneven distribution, natural factor, anthropogenic factor.

Խնդրի դրվածքը: Հայաստանի Հանրապետության տնտեսության տարածքային պատկերը և տարաբնակեցման առանձնահատկությունները գերազանցապես պայմանավորված են բնաաշխարհագրական պայմանների բազմազանությամբ, գյուղատնտեսության՝ հատկապես, բուսաբուծության և բնակավայրերի կառուցման համար հողային ռեսուրսների սակավության, հասարակության տնտեսական գործունեությունը նվազեցնող, իսկ հաճախ սահմանափակող բնական գործոնների առկայությամբ:

Խորհրդային պլանային տնտեսական համակարգի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների հետևանքով մեր հանրապետության տարածքը յուրացվել է տարերայնորեն, որի արդյունքում էլ տարաբնակեցվել է խիստ անհավասարաչափ: Ստեղծվել է միակենտրոն (մոնոցենտրիկ) մի համակարգ՝ տնտեսապես հզոր, զարգացած, մայրաքաղաքային գոտի, սակայն տնտեսապես թույլ զարգացած եզրային հատվածներով (Ծիրակի և Արագածոտնի մարզերի հյուսիսային տարածքները, Տավուշի և Սյունիքի տարածքների մեծ մասը):

ՀՀ տարածքի տարբեր հատվածների համեմատաբար հարուստ ռեսուրս-ներն (հումքային, հանգստի, ջրային) օգտագործվել են ոչ մեծ ծավալներով ու գրեթե անարդյունավետ: Սույն հոդվածում խնդիր է դրվել վեր հանել ՀՀ տարածքում բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման ժամանակակից

* E –mail: V.grigoryan@ysu.am

պատկերի բնորոշ գծերը և դրա հետ կապված ՀՀ տարածքի տնտեսական յուրացվածության աստիճանի որոշ հարցերը: Խորհրդային տնտեսական և սոցիալական քաղաքականությունը դրոշմվել է բնակավայրերի տեղաբաշխման, քանակական ցուցանիշների, զբաղվածության և այլ գործոնների վրա:

Հետազոտության մեթոդիկան: Աշխատանքում օգտագործվել են վիճակագրական, վերլուծության, ամփոփման, ընդհանրացման, համեմատական և անալոգիայի (նմանակության) աշխարհագրական մեթոդները, իսկ սկզբնաղբյուրներ են հանդիսացել ՀՀ ԱՎԾ-ի հրապարակված տվյալները, ՀՀ մարզերի և առանձին տարածաշրջանների բնակավայրերի 2020 թ. առ 1 հունվարի բնակչության տվյալները:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: ՀՀ-ում 1995 թ.-ին իրականացվեց վարչատարածքային ռեֆորմ, որի հետևանքով նախկին 37 վարչական շրջանների փոխարեն կազմավորվեցին 10 մարզեր և 58 տարբեր քաղաքային կարգավիճակ ունեցող բնակավայրերի փոխարեն՝ 49 քաղաքներ: Քաղաքների բնակչության թիվը պայմանավորված բնական, սոցիալ-տնտեսական գործոններով աճել են տարբեր ցուցանիշներով:

Հարկ է նշել, որ մանր քաղաքների տեսակարար կշիռը քաղաքային բնակչության մեջ կազմում է 5,7 է, փոքր քաղաքներինը՝ 11, միջին մեծության քաղաքներինը՝ 16 է, մեծ քաղաքներինը՝ 4,1, իսկ խոշոր քաղաքներինը՝ 5,9%: Հանրապետության խոշորագույն կամ միլիոնից ավելի բնակիչ ունեցող մայրաքաղաք Երևանի տեսակարար կշիռը քաղաքային բնակչության ընդհանուր թվակազմում 57,3% է: Դասակարգման ամեն մի կարգում քաղաքների բնակչության միջին քանակը կազմել է. խոշոր քաղաքային բնակավայրում՝ 112,4, մեծ քաղաքային բնակավայրում՝ 77,2, միջին մեծության քաղաքային բնակավայրերում՝ 303,2 հազար, փոքր քաղաքային բնակավայրերում՝ 208,3, մանր քաղաքային բնակավայրերում՝ 107,0 հազար [1]:

Աղյուսակ 1

ՀՀ քաղաքային բնակավայրերի դասակարգումը (01.01.2020 թ.) [1]

Մարզ	Թիվը	Ըստ բնակչության թվաքանակի (հազար մարդ)					
		մանր մինչև 10	փոքր 10–20	միջին 20–50	մեծ 50–100	խոշոր 100–500	1 մլն-ից ավելի
Արագածոտն	3	2	1	–	–	–	–
Արարատ	4	–	2	2	–	–	–
Արմավիր	3	1	–	2	–	–	–
Գեղարքունիք	5	1	4	–	–	–	–
Լոռի	8	4	3	–	1	–	–
Կոտայք	7	3	1	3	–	–	–
Շիրակ	3	1	1	–	–	1	–
Սյունիք	7	4	1	2	–	–	–
Վայոց ձոր	3	3	–	–	–	–	–
Տավուշ	5	3	1	1	–	–	1
Ընդամենը տեսակարար կշիռը ընդհանուր քանակում (%)	49/100	22/45	14/28,6	10/20,4	1/2	1/2	1/2

Աղյ. 1-ից երևում է, որ խոշոր և մեծ քաղաքները մեկական են Շիրակի (խոշոր) և Լոռու մարզում (մեծ): Միջին մեծության քաղաքները շատ են. Կոտայքի փոքրերը՝ Գեղարքունիքի և Լոռու, իսկ մանրերը՝ հանրապետության երեք մարզերում 3-ական՝ Կոտայք, Վայոց ձոր, Տավուշ և երկու մարզերում 4-ական՝ Սյունիք և Լոռի:

Ի դեպ Վայոց ձոր մարզի բոլոր քաղաքները մանր են: Վերլուծության արդյունքում բացահայտվել են նաև քաղաքային բնակչության և քաղաքային բնակավայրերի տեղաբաշխվածության անհամամասնությունները: ՀՀ քաղաքային բնակչության 57,3% կամ 1084 հազ. կենտրոնացված է մայրաքաղաք Երևանում: Մանր քաղաքների տեսակարար կշիռը ընդհանուր թվում 45 փոքր քաղաքներինը՝ շուրջ 28, միջին մեծության քաղաքներինը՝ 20,4, մեծ, խոշոր քաղաքներինը՝ 2-ական % է: Ուշադրության է արժանի այն փաստը, որ մայրաքաղաքը, խոշոր և մեծ քաղաքները՝ թվով 3, կենտրոնացված են Արարատյան դաշտում, Շիրակի սարահարթում և Լոռու մարզերում՝ մեկական:

Ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչությունը նույնպես անհավասարաչափ է տեղաբաշխված: Հաշվարկները ցույց են տալիս, որ մեր հանրապետության գյուղական բնակչության 18,33% (195643) ապրում է գերխոշոր գյուղական բնակավայրերում, որոնց տեսակարար կշիռը կազմում է գյուղական բնակավայրերի 3,3%-ը, խոշոր գյուղական բնակավայրերում՝ 23,75% (251055), տեսակարար կշիռը կազմում է գյուղական բնակավայրերի 6,9%-ը: Փոքր և մանր գյուղական բնակավայրերում՝ 7,13% (76194), իսկ տեսակարար կշիռը թվաքանակում՝ 39,4% [2]:

Աղյուսակ 2

ՀՀ գերխոշոր և խոշոր գյուղական բնակավայրերը (2020 թ.) [1]*

Մարզ	Գերխոշոր	Խոշոր	Բնակչության թիվը (մարդ)	
			գերխոշոր	խոշոր
Արագածոտն	2	8	12170	31224
Արարատ	5	12	35472	4508
Արմավիր	3	18	18244	65972
Գեղարքունիք	9	10	61764	43123
Լոռի	2	3	11623	11788
Կոտայք	7	5	44273	18633
Շիրակ	2	4	15116	13073
Սյունիք	0	0	0	0
Վայոց ձոր	1	0	5071	0
Տավուշ	0	6	0	22162
Ընդամենը	31	66	203733	251055

* Գյուղական բնակավայրերն ըստ բնակչության թվաքանակի դասակարգվել են հետևյալ սկզբունքներով. Գերխոշոր՝ 5000 և ավելի, խոշոր՝ 3000– 4999, մեծ՝ 1000–2999, միջին՝ 500–999, փոքր՝ 100–499, մանր՝ մինչև 99 բնակիչ:

Գերխոշոր և խոշոր գյուղական բնակավայրերը տեսակարար մեծ կշիռ ունեն Գեղարքունիքի, Կոտայքի և Արարատի մարզերում, որտեղ համապատասխանաբար բնակվում են մարզերի գյուղական բնակչության՝ 38,3, 38,8 և 19,2%-ը [3]:

Վայոց ձորի մարզում կա գերխոշոր 1 բնակավայր (2,4%), որտեղ ապրում է գյուղական բնակչության շուրջ 14,3%-ը: Ըստ աղ. 2 տվյալների Սյունիքի մարզում բացակայում են խոշոր և գերխոշոր գյուղական բնակավայրերը, մինչդեռ մանր՝ 38 և փոքր՝ 42 գյուղական բնակավայրերն ամենամեծ տեսակարար կշիռ ունեն, որտեղ ապրում են մարզի գյուղական բնակչության 33%-ը (աղ. 3):

Աղյուսակ 3

ՀՀ փոքր և մանր գյուղական բնակավայրերը և բնակչության թիվը (2020 թ.) [1, 2]

Մարզ	Մանր		Փոքր		Մանր		փոքր	
	թիվը	%	թիվը	%	մարդ	%	մարդ	%
Արագածոտն	7	5	39	33	228	0,03	11112	11
Արարատ	1	0,04	5	5,3	0	0,01	901	0,5
Արմավիր	0	0	5	5,3	0	0	1304	0,7
Գեղարքունիք	8	8,6	30	32,3	272	0,12	8309	5,2
Լոռի	19	15	44	36	932	1	11829	13
Կոտայք	2	3,2	6	9,7	78	0,07	2110	1,8
Շիրակ	17	13,4	39	30,7	567	0,6	13443	24,5
Սյունիք	50	38	56	42	2016	4	12964	29
Վայոց ձոր	11	21	20	38	230	0,7	4903	15
Տավուշ	2	3	15	25	0	0	4996	7
Ընդամենը	117	12,35	259	27,15	4323	0,4	71871	6,73

Գյուղական բնակավայրերի տարածքային տեղաբաշխումը նույնպես անհավասարաչափ է: Գերխոշոր, խոշոր, մեծ և միջին մեծության գյուղական բնակավայրերի մեծ մասը գերազանցապես տեղաբաշխված են հարթավայրերում և նրանց եզրավորող նախալեռնային գոտիներում: Զբաղեցնում են մարզերի ոռոգվող ու բերրի հողերը, տեղադրված են միջպետական և ներպետական ճանապարհների հարևանությամբ, որոնք բարենպաստ ազդեցություն են թողնում տարաբնակեցման վրա: Բնակավայրերի խտության ամենաբարձր ցուցանիշներն ունեն Արմավիրի՝ 0,75, Արարատի, Շիրակի և Արագածոտնի՝ 0,4-ական մարզերը: Ամենացածրը՝ Վայոց ձորի մարզը՝ 0,17 (ցուցանիշը հաշվարկված է 100 *կմ*^{2} տարածքի հաշվով) [4]:

Բնակչության խտության ամենաբարձր ցուցանիշներն ունեն (մարդ/*կմ*^{2}) Արմավիրի՝ 212, Արարատի՝ 123, Կոտայքի՝ 120, Շիրակի 86, ամենացածրը՝ Վայոց ձորի՝ 21 մարզը [5]:

Հանրապետության տարածքում բնակչության ու բնակավայրերի խիստ անհավասարաչափ և օջախային բաշխվածությունն իր անմիջական ազդեցությունն է թողել տնտեսության զարգացման և տարածքի յուրացվածության աստիճանի վրա:

ՀՀ տարածքն ըստ տնտեսական և քաղաքաշինական յուրացվածության աստիճանի կարելի է բաժանել 4 գոտիների. ինտենսիվ կամ ակտիվ յուրացված, թույլ կամ սակավ յուրացված, հանգստի (ռեկրեացիոն) և բնապահպանական, բնակեցման համար անբարենպաստ: Ռեկրեացիոն և բնապահպանական գոտին ընդգրկում է անտառտնտեսության հողերը, հանգստի գոտիները և օբյեկտները, պետության կողմից հատուկ պահպանվող տարածքները (ազգային պարկերի տարածքների մեծ մասը, արգելոցներն ու արգելավայրերը):

Գոտիների սահմաններն անցնում են բնական կամ մարդածին օբյեկտներով՝ գետերով, անտառային զանգվածների եզրերով, երկաթուղիներով, խճուղիներով, ջրանցքներով [4]:

Ինտենսիվ կամ ակտիվ յուրացված գոտին ներառում է մայրաքաղաք Երևանը, Արմավիրի մարզը գրեթե ամբողջությամբ, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի մարզերի հարթավայրային մասերը, Քասաղ և Հրազդան գետերի հովիտները, Շիրակի մարզի կենտրոնական հարթավայրային տարածքը, Լոռու սարահարթն իր Փամբակ, Ձորագետ, Տաշիր գետերի հովտային մասերով, Սևանա լճի ափամերձ գոտին, Արփա, Վարարակ, Որոտան, Ողջի գետերի հովիտները, Գորիսի սարավանդը [4]:

Թույլ կամ սակավ յուրացված գոտին իր մեջ ներառում է Բաղրամյանի տարածաշրջանի որոշ հատվածներ, Արարատի մարզի հյուսիսարևելյան մասը՝ Գեղամա, Ուրծի, Երանոսի լեռների մինչև 2000 *մ* բարձրության արևմտյան և հարավ արևմտյան, Արագածի մինչև 2200 *մ* բարձրության լանջերը, Շիրակի սարահարթի հյուսիսային հատվածը, Աշոցքի սարահարթը, Լոռու մարզի գետահովիտներին հարող ցածր լեռնալանջերը, Սևանի, Վարդենիսի ցածր լեռնալանջերը, Ճամբարակի տարածաշրջանը, Սյունիքի մարզի գետահովիտների մերձակա լեռնալանջերը:

Բնակեցման անբարենպաստ գոտին իր մեջ ներառում է ՀՀ տարածքի 2300 *մ*-ից բարձր տարածքները (ՀՀ բնակեցման վերին սահմանը 2340–2350 *մ* բարձրություններն են, Գեղարքունիքի մարզ՝ Վերին Շորժա, Նշխարք) [6]:

Մեր հանրապետության տարածքի 56%-ը բարենպաստ է բնակեցման համար, որը տարաբնակեցված է անհավասարաչափ: Ինտենսիվ կամ ակտիվ յուրացված գոտին կազմում է ՀՀ տարածքի 18,2%-ը, իսկ թույլ կամ սակավը՝ 38%-ը [4]:

ՀՀ բնակչության շուրջ 89 և քաղաքային բնակչության 99%-ը կենտրոնացված է ինտենսիվ յուրացված, իսկ բնակչության ավելի քան 11 և քաղաքային բնակչության 1%-ը՝ թույլ յուրացված գոտում [4]:

Հարկ է նշել, որ ինտենսիվ յուրացված գոտում բնակչության խտությունը չափազանց բարձր է՝ 500–570 մարդ/*կմ*^{2}, որը գերազանցում է միջազգայնորեն ընդունված խտության էկոլոգիական շեմային չափանիշը (մինչև 200 մարդ/*կմ*^{2}) մի քանի անգամ: Այստեղ 100 *կմ*^{2} վրա տեղաբաշխված է 10 բնակավայր: Թույլ յուրացված գոտում բնակչության խտությունը կազմում է ավելի քան 10 մարդ/*կմ*^{2}, իսկ 100 *կմ*^{2} վրա տեղաբաշխված է 3 բնակավայր:

ՀՀ վարչական միավորների տնտեսական և քաղաքաշինական յուրացվածության մակարդակները նույնպես շատ տարբեր են: Տարածքի բնակեցման ամենաբարձր տեսակարար կշիռ ունեն Արմավիրի՝ 99,3%, իսկ ամենացածրը՝ Սյունիքի՝ 37,3% մարզերը: Այստեղ հաշվի չի առնված մայրաքաղաք Երևանը: Ինտենսիվ յուրացված գոտու ամենաբարձր տեսակարար կշիռ ունեն Արմավիրի՝ 62,8%, իսկ ամենացածրը՝ Տավուշի՝ 5% մարզերը: Թույլ յուրացված գոտու ամենաբարձր տեսակարար կշիռ ունեն Վայոց ձորի՝ 578%, իսկ ամենացածրը՝ Սյունիքի՝ 26% մարզերը [4]:

Այսպիսով, ինտենսիվ յուրացված գոտու տարածքի տեսակարար կշիռը տատանվում է 5,0–32,0%-ի սահմաններում (ըստ մարզերի), որտեղ բնակվում են մարզերի բնակչության 50–97%-ը [4]:

Բնակավայրերի տեղաբաշխման ամենաբարձր խտություն ունեն (բնակավայր/100 *կմ*^{2}) Արարատի՝ 15, Գեղարքունիքի՝ 13, ամենացածրը՝ Վայոց ձորի՝ 5, Շիրակի՝ 6 մարզերի ինտենսիվ յուրացված գոտիները: Թույլ յուրացված գոտիներում ամենացածր խտություն (բնակավայր/100 *կմ*^{2}) ունեն Արարատի՝ 0,4, Գեղարքունիքի՝ 1, Վայոց ձորի՝ 2 մարզերը:

ՀՀ բնակեցման հիմնական առանցք ունի արևմուտքից դեպի արևելք ձգվածություն: Ներառում է Արարատյան գոգավորությունը (Երևանը, Արարատի և Արմավիրի մարզերի ինտենսիվ յուրացված գոտիները), Երևանից դեպի հյուսիս–արևելք, Երևան–Սևան ավտոմայրուղու երկարությամբ՝ ընդգրկելով Արագածոտնի և Կոտայքի մարզերի ինտենսիվ յուրացված գոտիները, հասնելով մինչև Սևան և Ապարանի սարահարթ [4]: Այս առանցքին բնորոշ է քաղաքային բնակավայրերի մեծ թիվը (16 քաղաք, այդ թվում խոշորագույն քաղաք Երևանը և միջին մեծության 6 քաղաք), միմյանցից ոչ մեծ հեռավորությամբ (նրանց միջև միջին հեռավորությունը 15–30 *կմ* է, տրանսպորտային մատչելիությունը չի գերազանցում 30 *րոպե*): Այս առանցքում են տեղադրված ՀՀ գերխոշոր գյուղերի ավելի քան կեսը՝ 16, խոշոր գյուղերի 2/5-ից ավելին: Սա պայմանավորված էր խորհրդային տարիներին սոցիալ-տնտեսական՝ արտադրական, կոոպերացիայի, կայուն կապերի առկայությամբ: Մեր օրերում այդ կապերը խիստ նվազել են, բայց պահպանվել է բնակչության տեղաբաշխվածության կենտրոնացված բնույթը: Այս առանցքի վրա կենտրոնացված է ՀՀ քաղաքային բնակչության 66%-ը և գյուղական բնակչության 44%-ը:

Եզրակացություն: ՀՀ տարածքում խորհրդային տարիներին ձևավորված բնակչության ու բնակավայրերի խիստ անհավասարաչափ և օջախային տեղաբաշխման պատկերը պահպանվել է նաև հետխորհրդային ժամանակահատվածում և իր անմիջական ու միջնորդավորված ազդեցությունն է թողնում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր կողմերի, մասնավորապես՝ տարածքի յուրացվածության աստիճանի վրա: Պետության գլխավոր խնդիրներից մեկը պետք է լինի իրականացնել տարածքային և տարածաշրջանային զարգացման այնպիսի քաղաքականության, որը կնպաստի ՀՀ տարածքում բնակչության տեղաբաշխման մեջ առկա խիստ մեծ տարբերությունների մեծացմանը, յուրացվածության ցածր աստիճան ունեցող տարածքներում բնակչության թվի ավելացմանն ու դրանց սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Ստացվել է՝ 19.05.2021
Գրախոսվել է՝ 02.07.2021
Հաստատվել է՝ 07.07.2021

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *ՀՀ ԱՎԾ: ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով*: Երևան (2020), 324 էջ:
2. Grigoryan V.V., Sahakyan N.A. Լեռնային գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները հայաստանի հանրապետությունում: *ԵՊՀ գիտական տեղեկագիր: Երկրաբանություն և աշխարհագրություն* **55** : 1 (2021), 57–67. https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.1.057

3. Պոտոսյան Ա.Հ. ՀՀ գյուղական տարածքների բնորոշ գծերը և զարգացման հիատապ խնդիրները: *ԵՊՀ գիտական տեղեկագիր: Երկրաբանություն և աշխարհագրություն* **53** : 1 (2019), 57–63.
https://doi.org/10.46991/PYSU:C/2019.53.1.057
4. http://www.mud.am/maps/tarabnak.pdf
5. Ավետիսյան Ս.Ս., Գրիգորյան Վ.Վ. *Հայաստանի Հանրապետության բնակավայրերի տեղեկատու*: Երևան (2018), 1056 էջ:
6. Պոտոսյան Ա.Հ. *Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը*: Երևան (2017), 466 էջ:

В. В. ГРИГОРЯН

ПРОБЛЕМЫ РАЗМЕЩЕНИЯ ПОСЕЛЕНИЙ И ЭКОНОМИЧЕСКОГО ОСВОЕНИЯ ТЕРРИТОРИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Резюме

Современное расселение населения и размещение поселений в РА сформировалось под влиянием исторических, природно-географических, социально-экономических и др. факторов. И как следствие, территирия РА отличается неравномерностью и очаговым размещением поселений. В статье рассматриваются проблемы, связанные с размещением населения, а также со степенью экономического территориального освоения в РА.

V. V. GRIGORYAN

THE PROBLEM OF PLACEMENT OF THE POPULATION AND SETTLEMENTS DEVELOPMENT OF THE TERRITORY IN REPUBLIC OF ARMENIA

Summary

The current picture of the distribution of the population and settlements in Armenia has been affected by natural geographical, socio-economical and other factors. Because of the latter, the territory of the Republic of Armenia is distinguished by an extremely uneven distribution of the population and settlements. The article addresses the issues of the location of the population and settlements in the Republic of Armenia and the degree of appropriation of the area related to the latter.